

- |  |     |
|--|-----|
| Հ. Եսայի Գոռոզեան. — Թափփի և Հայ վիպագրութիւնը . . . . .                                     | 160 |
| Հ. Եղիա Փէջիկեան. — «Դաւիթ բէկ» ի պատմական աղքիւրները և Մխիթարեանք. 172                      |     |
| Յ. Քիշրտեան. — Յովհաննէս Թէկուրանցիի տաղ «Վասն ստեղծման աշխարհի» . . . . .                   | 188 |
| Արտաշազդ Արքեպս. Սիրուեեան. — Պատմութիւն Հալէպի քահանայից . . . . .                          | 198 |
| Գ. Հետսէր. — Նիւթեր արեւմտահայ աշխարհաբարի պատմութեան համար . . . . .                        | 201 |
| Ալիշան Հ. Պ. — Հայաստանի ոգին (աշխ. թրգմ. Հ. Վ.՝ Յովհաննէսիան) . . . . .                     | 207 |
| Արտեն Երկար. — Տրոռում . . . . .   | 209 |
| Ք. Ա. Հ. — Տասապանքի ուահեր . . . . .  | 210 |
| Շ. Ծերոնիեան. — Հայ գպրոց . . . . .  | 210 |
| Ամրատ - Բիշրատ. — Լեռնակեանի մը յուշտեարը (ինքնակենսագրութիւն). . . . .                      | 211 |
| Արուանձտեանց. — Ուզերձ առ Վ. Հ. Ալիշանիան վրդ . . . . .                                      | 215 |
| Հ. Թաղենո Թոռմաձան. — Անկրօն գաստիարակութիւն՝ մեծագոյն աղէտը մարդկային ընկերութեան . . . . . | 216 |
| Հ. Վահան Յովհաննէսիւսեան. — Առախս Ապէպայի Հայ նկարիչը՝ Հայկ Երգնկացեան . . . . .             | 228 |
| J. de Manasse. — Աշոտ Զօրեան (նըկարիչ) . . . . .   | 231 |
| Թղրակից. — Զարեհ Մութափեան . . . . .   | 232 |
| Հրաչ Քաջարենց. — «Հայուհին Պատմութեան առջեւ» (գրախօս.) . . . . .                             | 233 |
| Յ. Քիշրտեան. — «Oriental manuscripts of the John Frederick Lewis Collection» etc. . . . .    | 234 |
| Քաջարենց Հրաչ. — «Արեւագալ» . . . . .  | 236 |
| Հ. Ա. Յովհաննէսիւսեան. — «Խարբերդի եղենը» . . . . .  | 238 |
| Խմբ. — Քսոնեւհինգամեայ Յոբեկեան քահանայութեան Արէի. Պետրոս. Արքեպս. Քէտիթեանի . . . . .      | 239 |
| Քասապեան Կերսէս. — † Փրոֆ. Ֆրեմերիք Մաքլէր . . . . .   | 242 |

## SOMMAIRE


1938 Juin - Septembre N. 6 - 9

N. 6 - 9

p.:

- |   |     |
|---|-----|
| <i>P. Isaïe Krouzian.</i> — Raffi et le Romanticisme Arménien. . . . .  | 160 |
| <i>P. Elie Paitchikian.</i> — Les sources historiques de «David begh» et les Pères Mékhitharistes de Venise . . . . . | 172 |
| <i>H. — Kurdian.</i> — Le poème de J. Toulgourantzi sur la «Création du monde»  | 188 |
| <i>Mgr. Ardash Surméyan.</i> — Histoire des prêtres d'Alep. . . . .   | 198 |
| <i>K. Henassière.</i> — Matériaux pour l'histoire du dialecte occidental de l'Arménien moderne. . . . .               | 201 |
| <i>Alichan P. L.</i> — L'âme de l'Arménie (trad. en arm. moderne par P. V. Hovhannessian). . . . .                    | 207 |
| <i>Arsène Yergath.</i> — Triste . . . . .   | 209 |
| <i>K. P. A.</i> — Des moments de tribulations . . . . .   | 210 |
| <i>Ch. Dséronian.</i> — L'école Arménienne. . . . .   | 210 |
| <i>Sempat-Burat.</i> — Les inémoires d'un montagnard (autobiographie) . . . . .                                       | 211 |
| <i>Serrantsdians.</i> — Hommage au P. L. Alichan . . . . .  | 215 |
| <i>P. Th. Tomadjan.</i> — L'éducation sans Dieu le plus grand malheur de la Société humaine . . . . .                 | 216 |
| <i>P. Vahan Hovhannessian.</i> — Le peintre arménien d'Addis Abéba: Haïg Erzinkatzian . . . . .                       | 228 |
| <i>J. de Manasse.</i> — Achod Zorian (peintre) . . . . .  | 231 |
| <i>Correspondant.</i> — Zareh Moutafian. . . . .  | 232 |
| <i>H. Katcharentz.</i> — «La femme Arménienne dans l'histoire» (recension) . . . . .                                  | 233 |
| <i>H. Kurdian.</i> — «Oriental manuscripts of the John Frederick Lewis collection» etc. . . . .                       | 234 |
| <i>H. Katcharentz.</i> — «Arévakal» . . . . .   | 236 |
| <i>P. M. Hovhannessian.</i> — «Le crime de Kharpout». . . . .   | 238 |
| <i>Réd.</i> . . . . . 25 <sup>ème</sup> anniv. de l'ordination sacerdotale de Mgr. Pierre Kéfidjian . . . . .         | 239 |
| <i>Nérsès Kassabian.</i> — Prof. Frédéric Macler . . . . .  | 242 |

Voir la suite, page 3.



Բ Ա Զ Մ Ա Վ Ե Ւ Պ

ՀԱՅԴԻՍՏԱՐԱՆ

առ սովորական - գրական - գիտական - բարութական

ՅՈՒՆԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ ԹԻՒ 6-9

ՎԵՆԵՏԻԿ Ս. ԴԱԶԱՐ

С У Б І Й

th

۲۸۳ ۲۸۴ ۲۸۵ ۲۸۶ ۲۸۷ ۲۸۸ ۲۸۹ ۲۹۰ ۲۹۱ ۲۹۲ ۲۹۳ ۲۹۴ ۲۹۵ ۲۹۶

( Խննդ եան Հարիւրամեակին առիթով, 1837-1937)


ԽԱՆԴԱՎԱՐ ցոյցերու մէջ, գրական  
հատորներով և ակումբներով տօնեցինք  
յիշատակը մեր ժողովուրդի մեծ վիճա-  
սանին, որ զար մը առաջ իր «Խենթ»ին  
մէջ երազեց փառքը մեր ներկայ ժողո-  
վուրդին և իր «Լայճեր»ով լոյսը բուռնկ-  
ցուց նոր սերունդի նոր մտայնութեան, և  
երեսուն տարի անշարժ տեսլականէ մը  
դիւթուած, զանգը հնչեցուց ազգային զի-  
տակութեան:

Մեզմէ դար մը առաջ, բայց իր հատորները դեռ գրասեղաններու վրայ են և սերունդէ սերունդ միշտ նոր կայծեր առաջ կը բերեն, որովհետեւ կը բովանդակեն ցեղի մը դարաւոր երազը, որ մինչեւ իր իռականացումը յոյսեր կը ներշնչէ:

Ազգային մամուլը իր բոլոր ճիւղաւո-  
րութիւններով զբաղեցաւ Թափփիով և Թափ-  
փիական հարցով։ Ամսագիրներ և օրաթեր-  
թերը զբեթէ բոլորն աւ Լայն Էջեր նուի-  
րեցին անոր կենսազրականին, զործերուն  
և հայեցակէտներուն շուրջ։ զայն կոչե-  
չարց», «ունակ առաջարկ առաջարկ առաջ-  
րափփի եղաւ՝ զբական ասպարեզի վրայ։  
Վէլ Թափփիի ազդեցութեան տակ զար-  
ձաւ զօրեկ և ներուժ ազգակ մը ազգային  
«ինքնաբննութեան» և զիտակցութեան  
զարթումին, կապուեցաւ ժամանակակից  
11

ԲՈՂՋԱՎԵՐ ՅՈՒՆԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ 1938

ընկերային ու զաղափարախօսական հոս-  
սանքներուն հետ և հասարակական գետնի  
վրայ եղաւ լաւագոյն ներկայացուցիչը մեր  
ցեղային պահանջներուն, և այնուհետեւ



Բաֆֆիական հարցը դարձաւ բովանդակ  
մեր ազգային հարցը, «Հայկական հարց»:

#### ԲԱՖՖԻ ԵՒ ԻՐ ՎԻՊՈԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Վէպը մեր մէջ Բաֆֆիով չի սկսիր, և  
սխալ է կարծել, ինչպէս ըսողներ եղան  
ազգային ամսագիրներու և օրաթերթերու  
մէջ՝ թէ պարզապէս Բաֆֆի եղած ըլլայ  
Հիմնադիրը հայ վիպազրութեան կամ սկիզ-  
բը Արեւելահայ գրականութեան<sup>1</sup>:

Յորելեարին պատուին համար սխալ  
գնահատումներու չերթանը:

Ֆրանսական վէպն ալ թէեւ Ժ. և Ժ.Թ.  
դարերուն ստացաւ իր զարկը և արդիա-  
կանացումը, բայց Ֆրանսացիք իրենց վէ-  
պին հնութիւնը կը տանին մինչեւ Ժ. դար  
և անկէ ալ անդին:

Նմանապէս մեր բով վէպին ծագումը  
աւելի հեռուները կրնանք փնտուել և դէպի  
Բաֆֆի մօտենալով, իրմէ առաջ կը գոտ-  
նենք Արովեան, Մեսրոպ Թաղիաղեանց,  
Պերճ Պոօշեանց և Ծերենց. զլուխ ըլլալով  
Արովեան՝ Պոօշեանցի և Ծերենցի հետ  
հիմնադիրը եղաւ մեր ազգային արդի վէ-  
պին և իրմով հիմը գրուեցաւ Արեւելահայ  
նոր Գրականութեան<sup>2</sup>:

Արովեանի ազգեցութիւնը լայն չափով  
երեւան կու զայ Բաֆֆիի վէպերուն մէջ:  
Բաֆֆիի մեծագոյն արժանիքը եղաւ՝ վէ-  
պը արագօրէն զարգացնել, ընդարձակել  
նիւթի զանազանութեան մէջ, կատարե-  
լագործել զայն լեզուին ու արտայայտու-  
թեանց մէջ և տակաւին ցարդ չգերազան-  
ցուած երեւակայութեամբ օժտել զայն,  
վէպը հաղորդել արեւելքի և արեւմուտքի  
բովանդակ հայութեան և զայն ազգային  
զգացումներուն արտայայտի չ գործիքը  
դարձնել: Եղաւ աւելի մերուիկ վիպագիր  
և հիմնադիր վիպական նոր ուղղութեան:  
Ահա հոս է իր արժանիքը, և այս տեսակին  
մէջ մնաց մեծագոյն վիպասանը:

#### ԲԱՖՖԻ ԵՒ ԻՐ ՎԻՊՈԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Բաֆֆի արկածախնդիր (aventurier)  
վիպասան մը չէ, ոչ ալ իր վէպերը գրած  
է թեթեւ մտայնութիւնները զուարձա-  
ցնելու կամ երիտասարդութիւնը ցնորդնե-  
րու աշխարհը փոխադրելու նպատակով:  
Ինքը պայքար ունի կեանքին հետ և իր  
վէպերով կ'ուզէ ապրեցնել և բովանդակ  
ցեղի մը գոյութեան իրաւունքները պաշտ-  
պանել:

Բաֆֆի կը պատկանի Վիպական (Ro-  
mantique) դպրոցին: Հակառակ էր ժա-  
մանակակից իրապաշտութեան (Réalisme)  
«ինձ թւում է, կ'ըսէր, որ Բէալիստական  
գրականութիւնը անցողակի է, շուտով Ռո-  
մանդիզմը նորէն պիտի իշխէ», ինչ որ  
ցոյց կու տայ թէ Բաֆֆի գաղափարի մարդ  
էր, երազատեսի բան պատմազրի նկա-  
րի:

1. Ա. Համբարձումեան - Ասպարեզ, 1938, թ. 1816,

0շական - Բաֆֆի, հրատ. Բաֆֆի Ծննդ. 100 ամսա-

կի կազմակերպիչ Յանձնաժողովին. Փարիզ, 1937, էջ 79:

2. Ա. Զապահեան, Անահիտ 1938, թ. 5-6, էջ 28:

բազրով և ինքզինքն է որ գրած է իր բոլոր բաֆֆին մէջ:

Իր վէպերուն նիւթը թէեւ ապրուած  
կեանքն ու միջավայրէն և անցեալի պատ-  
մութենէն վեր առնուած են, բայց զինքը  
զբաղեցնողը իրականը կամ պատմականը  
չէ, այլ միտքը. իրականութիւնը կը զար-  
դարէ երեւակայական, ինքնաստեղծ ըլլա-  
ջանակով և ինք ամէն նախադասութեան  
տակ ծածկուած, ցարովիչը կը զառնայ  
իր գաղափարներուն: Այս մասին աւելի  
լայնօրէն, երբ իր ստեղծած տիպարներուն  
շուրջ պիտի անդրադառնանք:

#### ԲԱՖՖԻ ԳՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

Բաֆֆի իր արուեստին համար գրական  
գոհացուցիչ նախապատրաստութիւն չու-  
նեցաւ. զինքը գրական ասպարէզի կոչողը  
իր բնատուր գրիչը եղաւ, և իր անհատ-  
նում երեւակայութիւնը՝ իր տեսիլներուն  
նիւթ և գոյն հայթայթողը: Նմանապէս  
իմաստաթրական բաժնին մէջ չունեցաւ  
մասնակի կամ ընդհանուր զարգացում,  
այլ իր անձնազրոշմ ըմբռնումները ծա-  
ռայեցուց իրը լուծում ընկերային ու բա-  
րոյական հարցերուն մէջ. և սայթացում-  
ները քիչ չեն: Շիրվանզադէ կ'ըսէր թէ  
«Բաֆֆին շատ քիչ էր կարգում, շարու-  
նակ գրում էր»:

Ազգայիններէն՝ ազգեցութիւնը կը կրէ  
Արովեանի և Ծերենցի. կարդացած էր  
վենետիկի Միլիթարեաններուն դասական  
թարգմանութիւնները, թագրատուններն, Ա-  
մանական գամբէնի պատ-  
մութեան հակայ հատորները շատ ներշն-  
չումներ տուած են իր ուղղութեան վրա:

Օտարներէն՝ ծանօթ էր Ռուս գրակա-  
նութեան թուլատոյի, Տուրքենեւի և Տու-  
սուսոյեւարիի վէպերուն: Ֆրանսականէն՝  
կարդացած էր Հիւկոյի «Թշուառները»:  
Խօմէն Սիւի «Թափառական Հրեան» և  
Տիւմայի «Երեք հրացանակիրք»: Իսկ  
Անգլիականէն՝ Ռուսէր Սրօթ և Շէքսփի-  
րի մէկ քանի կտորները:

Գլխաւոր ազգեցութիւնը կրած է ռուս  
գրականութենէն, Հիւկոյին և Խօմէն Սիւին:

ԲԱՖՖԻ ԳՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

Վարագայական ըլլալով գրութիւնս,

նապատակ չունիմ Բաֆֆիի բոլոր զործե-  
րուն շուրջ տեսութիւններ կատարել, այլ  
անոնցմէ մէկ քանիով միայն կը սահմա-  
նափակուիմ:

Բաֆֆիի մեծագոյն երկերը կը նկատ-  
ուին – Խենթը, Դաւիթ Բէկ, Կայծերը,  
Խաչագողի Յիշատակարանը և Ամուլէ:  
Գրական առաջին արտադրութիւնները ե-  
ղան Սալիք և ուրիշ մէկ քանի վէպիկներ,  
որոնց նիւթը աղքատ և արուեստը թոյլ,  
որով սկսնակի մը թերութիւններէն զերծ  
չեն, բայց տեղ տեղ ցոյց կու տան ապա-  
գայ արտակարգ ու խիզախ տաղանդի մը  
փայլը և շնորհը, որոնք բնատուր էին  
իր քով:

Դեռ չկան հոն, ինչպէս կ'ըսէն, միս  
և արիւն դարձած գաղափարներ, ոգեւոր-  
ուած տիպարներ: Բաֆֆիի կը պակսէր  
զիտելու և զգալու աւելի լայն շրջանակ մը:

Շրջանակը շատ մեծ նշանակութիւն ու-  
նի անհատի մը մտաւոր թէ բարոյական  
կազմաւորումն մէջ, և ամէն մարդ ինչ-  
պէս իր ժամանակի, նոյնպէս իր շրջա-  
նակի գաւակն է: Ահա այդ պակասը լրա-  
ցաւ երբ Բաֆֆի իր բախտը կապեց Գրիգոր  
Արծրունիի «Մշակ»ին հետ, և Գ. Արծրու-  
նիի շատ բան կը պարտինք, որ մեկնասը  
հանդիսացաւ մեր երիտասարդ Գրիշին և  
անոր զեկավարութեան տակ է որ Բաֆֆի  
արտազրեց իր գլուխ գործոցները:

Թէ «Մշակ» որքան ազգեցիկ դեր կա-  
տարեց Բաֆֆիի վրայ, զայն կը կարդանք  
1884 մարտ 13-ին Բաֆֆիի առ Բրոֆ.  
Փանեանց գրած մէկ նամակին մէջ, ուր  
կ'ըսէ թէ «Ես իմ անունը կապուած եմ  
համարում նրա հետ» (Մշակ-ի հետ):

Նշանակալից է այս տեսակէտով «Մե-  
րութիւն» թերթին բացած պայքարը Բաֆֆիի  
Խենթ-ին դէմ: Երբ Խենթ-ին հրատարա-  
կուելին վերջ սոյն թերթը կը գրէր թէ  
գաղափարներու տեսակէտով Խենթ-ը նո-  
ութիւնը մը չունէր, այլ Մշակ-ի քարոզ-  
ներուն կը կունութիւնն էր, թէպէս Արծրու-  
նիի կը կապուած էր Խենթ-ը նու-  
թիւնը մը չունէր, այլ Մշակ-ի քարոզ-

1606-41



զանցուած էր Մեղու-ի տեսութիւնը, բայց  
Բաֆֆի պատասխանեց թէ «Այդ կարծիքի  
հետ ես համաձայն եմ»:

իր ուրիշ մէկ յօդուածին մէջ խօսելով  
Մշակ-ի յառաջ բերած շարժումի մասին,  
կ'ըսէք. «Մշակ-ը իր մոզական հարուա-  
ծով միանգամից շարժեց հասարակական  
թմրած մարմինը... լենդարակակց հայկական  
աշխարհի նեղ հորիզոները: Վաղեմի աւան-  
դական ինքնախարութեան փոխարէն սկը-  
սեց տիրապետել կրիտիկական հայեացըը:  
Մշակ-ի օրերում վիպագրուրինձը աշելի  
բայց շրջանակի մէջ դրեց իր պատկերները»:

Բաֆիկ և Մշակ զիւար բարձրացուցին,  
բայց իրականին մէջ զըլչն էր որ լեզու  
կու տար թուղթին:

Բաֆֆի Մշակ-ի միջոցով կտրեց կով-կասի սահմանները, աւելի լայնօրէն խօսեցաւ «Երկրագնտի զանազան կողմերում ցրված եղբայրների հետ», մօտէն հետեւելով մեր ժողովուրդի ճակատագրին, տեսաւ հայու դարաւոր քունը, մարած անոր զիտակցութեան մէջ անձնապաշտպանութեան տարրական զգացումները, և միւս կողմէն թուրքին ու քիւրտին անպատիժ մնացած կամայականութիւնները։ Վրայ հասաւ Ռուս-Թուրքական պատերազմը, Փերլինի Վեհածողովին ձախողումը, Ալաշկերտի կոտորածը։ Բաֆֆի ականատես եղաւ աղէտներուն, Էջմիածնի մէջ տեսաւ Ալաշկերտի մնացորդ գաղթականները. այլ եւս մէկդի թողուց իր վէպիկները, բարձրացուց բողոքի իր գրիչը և 1878-ին Ագուլիսէն «Մշակ»ին դրկեց իր «Զարարեդդինին»։

Այս փոքր վէպը թէեւ իր յեղափոխական գաղափարներով ազդեցութիւն մը գործած կ'երեւի աղետալի պայմաններու տակ գտնուող ժամանակակից ընթերցողներուն վրայ, ունենալով արիւն և կիրք արտայատող էջեր, բայց գեղարուեստական տեսակէտով զուրկ է մեծ արժէքէ. Կրկնութիւն մըն է նմանօրինակ նկարագրութիւններու և արիւնի:

Երկու տարի վերջ թափփի կը գտնուէր  
Թիֆլիս, գ. Աբգունիի խումբին մէջ:

Հոս աւելի ընդարձակուած էր իր շրջանակը. որբան խանդով լեցուն էր երիտասարդ Բաֆֆին և ինչ երազներով կը դիմաւորէր իր ապագան: Մշակ-ի խըմբագրատան մէջ ենք. Բաֆֆիի բերնէն լսենք թէ շրջանակը որբան ազդեցութիւն ունեցաւ իր վրայ. տեսնենք ինչ կը խօսի: «Իւրաքանչյուր սերունդի համար բանգ և ժամանակի մի որոշ լրէակը: Ես երբեք մոռանալ չեմ կարող 72 թուականը, երբ սկսւեցաւ հրատարակւել «Մշակ» լրագիրը:... Ամէն տեղ տիրում էր... մի տեսակ մեռելութիւն: Յանկարծ կարծես մի դիւթական գաւազանի հարւածից զարթւեցաւ կեանքը: Ոչ ոք չէր հաւատում, թէ այդպէս կարող էր լինել: Հաւատում էր միայն երիտասարդների մի փոքրիկ խումբ: Ես յիշում եմ այն գեղեցիկ տարիները... հրաշալի գիշերները, երբ այդ խումբը հաւաքուած խմբագրատան մէջ, կարգում էին, ծխում էին և վիճում էին: Մեզանից շատերը հագնելու շապիկ չունէին, մըտնում էին այնտեղ բոլորովին պատառուած կօշիկներով, այսուամենայնիւ մենք ամէնքս էլ Գատալիստի յոյսով հաւատում էինք, թէ կը տիրապետենք մի մեծ ապագայի:... Երեւ ես ունեցել եմ իմ կեանքում մի քանի ոսկի բոսկեներ, դրանք պատկանում են այն ժամանակին: Ժողովների մէն ոգեւորուած և բորբոքուած վիճարանութիւնները տեւում էին շատ անգամ մինչեւ զեշերւայ ժամը երկուսը: Փոքրիկ, բոլոր նիւթական միջոցներից զուրկ բայց բարոյապէս հարուստ խումբը ծրագրում էր հսկայական պրոժեքտներ:

«Այդ զօն-ըիշօտութիւնը... թէեւ մասսամբ ծիծաղելի էր, բայց գեղեցիկ էր, որպէս մանուկի ժպիտը, որ արտայայտութիւն է նոր սկսուղ կեանքի: Իդէաների խորին արբեցութեան մէջ, ամէն մի երիտասարդ մոռանում էր իր վիճակի դաժանութիւնը, և մտածում էր, վիճում էր հասարակաց բարօրութեան մասին: Կէս զիշերից յետոյ նիստը վերջանում էր: Խումբը ցրիւ էր գալիս բուլվարների վըրաւմբը... Այն ժամին, երբ բախտաւոր թիֆ-

լիսեցին հանգստանում էր իր փառաւոր քնարանի մէջ, մեր կիսամերկ շըջմոլիկ-ները, Գօլօվինսկի Պրօսպեկտի սալերը դղրդելով, քննադատում էին մի հասա-րակական հարց<sup>1</sup>»:

Հոս, այս ժողովներուն մէջ աւելի ընդարձակուեցաւ իր աշխարհայեացըը։ Հայրենիքի համար ճգնաժամի վայրկեաններ էին։ Դուրսի հանրութեան հետ ինը թափփի ալ Ռուս-Թուրքական պատերազմի պայմաններու ազգեցութեան տակ կը զտնուէր, երբ գեղարուեստորդն վրձինուած, 1880ին Մշակ-ի մէջ հրապարակ հանեց իր «Խենքը», որ գիտակցուրեան և ազատուրեան քալոզն էր, աւանդական ստրկութեան և նորահաս ընդվկող ազատութեան հակապատկերին պայքարը։

Թոմաս Լիքնտին, անիրական դէմքեր են, թափփին յղացուած անձնաւորութիւններ իր գաղափարները մարմնացնող։ Անիրական են Վարդանի, Հայրապետի և նմաններու բերնին մէջ զրուած ընկերային, ընկերվար - համայնական վարդապետութիւնները, կեանցի իմաստասիրութեան շուրջ բարձր սկզբունքները և պատմական ծանօթութիւնները։ Էջօի համաձայն, Գուգուկջեանի տիպարը թափփի փոխ առած է ոռւս վիպագիր Տուրքեննելէն. անոր նման սա եւս յեղափոխական քարոզիչ

« Խօնքը » կարելի է ըստ թէ Թափփիի մեծ երկերուն մէջ, թէեւ առաջինը և նուազ ստուարը, բայց ամենէն աշխատուած և յաջող վէպն է: Գրական շքեղ կառուցուածք մըն է, բնանկարներով, ընկերային վար- սաւեաց: Եւննեռու միութիւնական բա-

իրավունք ունենալու համար կազմակերպությունը մէջ նկատած՝ իր մանրամասնութեանց մէջ նկատած՝ խենթ-ը ունի իր անբնական և թոյլ կողմերը։

վէպը իր ամբողջութեան մէջ նկատ-  
ուած՝ հետաքրքրաշարժ յօրինուածք ու-  
նի, լարուած զիրքի մէջ կը պահէ ըն-  
թերցողին ուշազորութիւնը, ինչ որ վէպին  
յաջողութեան նշաններէն մին է. ընդլայ-  
նումները չափաւոր են քան միւս վէպե-  
րուն մէջ և թափքի հոս աւելի համակրելի և  
աւելի հսկողուական է, ինչ որ ուրիշ մէկ

Հոգերանական անբահական վիճակներ-այսպէս թումաս լիքէնտին, այս անբարոյ տիպը, Բաֆֆիի կամքով յանկարծ կը դառնայ մաքուր սիրոյ զոհ. արուեստական վիճակի մըն է փացած՝ մարդու մէջ մաքուր սիրոյ զաղափարին անբահականորէն տեղաւորումը. Բաֆֆի այսբանով միայն զմեզ հա-

«ԽԵՆՔԻՆ» մէջ արդէն լայն չափով

1. Բագրի. Հրատ. Յանձնաժողով. էջ 25-26:

ռաջուց ալ կը սիրէր, ինչու այն ժամանակ չսկսաւ զղալ. բարը տեղը լաւ չէ դրուած<sup>1</sup>:

Հոգերանօրէն անբնականութիւններ են դարձեալ, օրինակի համար, երբ, իֆէնտին հոգեվարքին մէջ, լարուած ուշադրութեամբ մտիկ կ'ընէ իրմէ քիչ հեռու կատարուող խօսակցութիւնը և իշուն առածն ըսելով կը մեռնի, պարզապէս ասոր համար, որ Բաֆֆի վերջին անգամ մըն ալ յիշեցնել կ'ուզէ ընթերցողին, որ այս մարդուն խօսակցութեանց մէջ անպակաս էին իշու առակները:

Բաֆֆիի տիպարները, գործիչները, նեղ դրուրեան մէջ գտնուելու պարագային, կը ստանան ցարդ անտեսուած յատկութիւններ և հնարաւոր ելքեր. այսպէս վարդան կը ստանայ « կատուի արագաշարժութիւն, օձի դիւրաթեքութիւն, սարդի արագութիւն » կամ կը դառնայ հմուտ վիրաբուժական արուեստին, հարկ եղած ատեն գրապանէն կ'ելեն դեղեր և սպեղանիներ:

Վէպին ուրիշ մէկ տկար կողմը կը կազմեն անբնական միջադէպերը, կնճիռները, անակնկաները, անտեղի մանրամասնութիւնները և երկարածիգ կրկնութիւնները: Անբնական կ'ըսենք անոր համար որ նոյն իսկ վէպին պատմականութեան պարագային, այդ միջադէպերը կը պատահին այնպիսի հանգամանցներու տակ, որ կը տարակուածինը թէ իրականին մէջ նմանօրինակ դէպեր հնարաւոր և բնական են:

Անակնկաները և կնճիռները երթեմն ազուցուած են կամայականութեամբ, երկընքէն եկած «յանկարծ» ներով: Բաֆֆիի բովքիչ մը շատ են այս յանկարծները. այնպէս որ իր օրով իսկ վամառ-վաթիպա դիտողութիւններ կ'ընէր այս մասին, ըսելով թէ « Բաֆֆիի հերոսները... նեղ ընկած դէպում... ջրից չոր են դուրս գալիս »:

Բաֆֆի հեռաւոր տեսիլներով և բարոզներով զբաղած, յաճախ նկարագրութիւնները երկարորէն կը բաշուին և նոյն պատկերն ու բացատրութիւնները զբեթէ նոյնութեամբ կը կրկնուին: Գրեթէ բառական կրկնութիւններ կը տեսնենք նաեւ զրբէ զիրք<sup>2</sup>:

Խորհրդածութիւնը զոր կ'ընենք, կը զօրէ Բաֆֆիի բոլոր գործերու մասին: Երկարաբանութիւնները և կրկնումները, որ աւելի լայնօրէն կը զգացուին հետագայ զործերուն մէջ, եթէ ուզենք արտաքին պարագայի մը վերագրել, պիտի արգարացնենք ասով միայն որ նիւթական նեղ կացութեան տակ, Բաֆֆի ստիպուեր է համեմատօրէն քիչ ժամանակի մէջ լայն էջեր արտագրել, առանց կարենալու վերջինները նախորդներուն հետ բաղդատել և անհրաժեշտ զեղչումներ կատարել: Բաֆֆի օր մը կ'ըսէր Շիրվանզադէի: « Այն օրը, երբ զրիչս մի կողմ դնեմ, ընտանիքս կը մեռնի անօթութիւնից ». Իսկ Շիրվանզադէ կ'աւելցնէ՝ թէ « Նա ժամանակ չունէր, շարունակ զրում էր »:

Խենրէն վերջ Բաֆֆիի երկրորդ մեծ գործը Դաւիր թեկ պատմական վէպին է, լոյս տեսած 1881-1882ին: Բաֆֆի սիրահար մըն էր պատմութեան, և այս տեսակտով շատ ազդուած է Զամչեանէն: Իր այս զործին իրը աղբիւր ունեցած է Որգար Գուլամիրեանի ձեռցով 1871ին էջմիածնի մէջ տպուած համանուն զրբոյկ մը, որուն վերնագիրն է « Պատմութիւն Դաւիր թէկին և պատերազմացն Հայոց Խափանու, որը եղեն ընդդէմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Ցեառն 1722 և Հայոց 1171 »<sup>3</sup>:

Խենթին մէջի ազատութեան շուրջ տեսական վարդապետութիւններէն վերջ, Բաֆֆի պէտք էր իր բարոզած վարդապետութեան շոշափելի և ազդու օրինակ-

1. Տես նմանապէս Դաւիր թէկի մէջ Խորէն Հայոց ուրբի երկարմանի տիպարը.

2. Հմմտ. Խենրը, էջ 54 և Դաւիր թէկի, էջ 406. Խենրը, էջ 307 և Դաւիր թէկի, էջ 420.

3. Այս զրբոյկը խմբագրողին և Շահումեան գերդաստանի մասին տեղեկութեանց համար հմմտ. Հ. Ալեքսանդր « Սիսական » (էջ 277, 300-6, 445-6, 528) և « Հայութիւններ » (էջ 502-3) եւն...

ներ տալ ժողովուրդին, ցուցնել անցեալին մեծագործութիւնները, ազատութեան համար զործադրուած զիւցազնութիւնները և ժողովուրդը բաջական կը նախնիբներով:

Բաֆֆի կը քննէ պատմութիւնը և ժամանակակից սերունդը կը գտնէ « հսկայ նախորդների թզուկ յաջորդներ »: Իր վիպապաշաշտ ուղղութեան հետեւանցով Բաֆֆի հոս ալ պատմականը կը ծառայեցնէ իր գաղափարները մարմաւորելու համար:

Ի հարկէ Բաֆֆիի բոլոր գաղափարներուն համապատասխան, պատմութիւնը չէր տուած մէկ մէկ տիպարներ. իրականութեան այս պակասը Բաֆֆի իր երեւակայութեամբ կը լրացնէ, ստեղծելով գաղափարական տիպարներ: Դ. Բէկի շէնքին կառուցուածքը աւելի հսկայ է, Բաֆֆի հոս աւելի հասուն է իր գաղափարներուն մէջ, զրիչը աւելի վարպետ և երեւակայութիւնը աւելի հարուստ:

Այս յատկութիւնները առանձին առանուած գերակառութիւն մը կը ներկայացնեն, բայց իր ամբողջ յօրինուածքին մէջ Դ. Բէկը յաջողագոյն վէպը չէ: Վէպը կիսաւարտ նկարի մը ոպաւորութիւնը կը թողու, և իրապէս ինչ որ կ'երեւի Բաֆֆի չէ կրցած վէպը իր պատմական բոլոր կը ստեղծել » և « եթէ Հայոց բոլոր հանճարները ծառայած լինէին իրանց Հայրենիքին », մեր հայրենիքը « այս թշուառ դրութեան մէջ չէր լինի »:

Բայց եկուր տես, որ « Հայը ստեղծում է մեծ մարդիկ... միայն օտարներին ծառայելու համար » և « թողած իր երկրի աւերակները, օտարի համար պալատներ է կանգնել ». Ահա դրանումն է մեր գըլիստոր հիւանդութիւնը »:

Բայց Բաֆֆի լաւատես է Հայաստանի բախտին:

\* \* \*

Դաւիր թէկին վերջ Բաֆֆի կը ձեռնարկէ զործի մը որ իր գլուխ զործոցն է վէպին կանոնաւոր յառաջիւածքում, ծանրագույն զինուուրներուն մանական վերջութիւնները անցուած են այնպէս որ արուեստական կնճիռներու և միջադէպերու լարին մէջ կորսուած է վէպին ողնաշարը, մայր գաղափարը:

Վէպը ունի պատմական և աշխարհապական անձզութիւններ՝ ճշգումի կա-

րուս: Այս մասին շահեկան է կարգալ Բըռփ. Ն. Ազոնցի « Դաւիր թէկ վէպի պատմական և գաղափարախօսական արժէքը » խորագրով յօդուածը<sup>1</sup>:

Ծանօթ է վէպի հերոսներէն Տէր Աւետիրը շուրջ տարաձայնութիւնը որ կայ Զամչեանի և Բաֆֆիի միջեւ: Զարմանց կը պատմառէ մեզի Բաֆֆիի այս տարածայնութիւնը. խորականութեան պատմականը մեծ մարդոց բով մեծ թիծ մըն է և կ'արտաւորէ նկարագրի ուղղութիւնը: Այրարատ ամսաթերթը այս մասին յօդուած մը ունի, ուր կը ջատագվէ Զամչեանի տեսակէտը<sup>2</sup>: Խակ Ն. Ազոնց իր վերեւ յիշուած յօդուածին մէջ լուսութեամբ կ'անցնի այս կէտիս վրայէն:

Բաֆֆիի ընկերային գաղափարախօսութիւնը աւելի ճպի է Դաւիր թէկի մէջ. գրական թերութիւններուն յարակից շատ օգտաէտ գասեր կը բարդ պատմութեանը աւելի հարուստ:

— Ծառայէլ ամենէն առաջ Հայրենիքին: Ահա վէպին ուղ և ծուծը, մանաւանդ թէ բոլոր իր գործունէութեան բնաբանը: Դառնութեամբ կը բողոքէ՝ թէ « Մէր թշուառ վիճակը մընք ենք ստեղծել » և « եթէ Հայոց բոլոր հանճարները ծառայած լինէին իրանց Հայրենիքին », մեր հայրենիքը « այս թշուառ դրութեան մէջ չէր լինի »:


Բայց եկուր տես, որ « Հայը ստեղծում է մեծ մարդիկ... միայն օտարներին ծառայելու համար » և « թողած իր երկրի աւերակները, օտարի համար պալատներ է կանգնել ». Ահա դրանումն է մեր գըլիստոր հիւանդութիւնը »:

Բայց Բաֆֆի լաւատես է Հայաստանի բախտին:

\* \* \*

Դաւիր թէկին վերջ Բաֆֆի կը ձեռնարկէ զործի մը որ իր գլուխ զործոցն է վէպին կանոնաւոր յառաջիւածքում, ծանրագույն զինուուրները անցուած են այնպէս որ արուեստական կնճիռներու և միջադէպերու լարին մէջ կորսուած է վէպին ողնաշարը, մայր գաղափարը:

1. Բաֆֆի, Հրատ. Յանձնաժողովի, էջ 122.  
2. Արարատ, տարի 1905, Ապրիլ, էջ 382-387.



Տ. ԱԿԱՆՅԵՎԸ

Հայոց տունը ուր ծմաւ Բաֆֆի

ըլլալ կը թուէր « կայձեր »ը, գրուած 1883-1887 տարիներուն մէջ, որ սակայն զժքախտութեամբ մը կիսաւարտ թողուած էն: 1200է աւելի էջերու մէջ ամփոփուած է բոլոր Բաֆֆին, իր բոլոր հայոցակէտներով, ընկերային, բարոյական, քաղաքական ու դաստիարակական ըմբռոնումներով, իր յղացումներուն համայնաւագումին է: « կայձեր »ուն մէջ, կ'ըսէ, « կայձեր » մի անբացատրելի խորհուրդ »: « կայձերը էին ցայտում այն ժամանակ միայն երբ սառն երկաթը... ջերմացնում էին և սկսում էին ծեծել » (38): Միշտ նոյն տեսականը. ծեծել, ջերմացնել ժողովուրդը, որ դուրս տայ իր կայձերը (463), որ տեսնէ թէ զուրկ չէ կենդանութենէ: Ահա « կայձեր »ու պարզելիք խորհուրդը: Գործը յօրինուած է կենսագրականի և

օրագրութեան ծեւով ֆարհատի մը, և սերտ կապ ունի, մանաւանդ Բ. հատորը, « Խաչագողի Յիշատակարան »ին հետ:

« կայձեր »ը դաստիարակական բնոյթ մը ունին: Հոս գունագեղ գրիչով նկարագրուած են ժամանակակից վանցերու և դպրոցներու վիճակը, արեւելեան մանկավարժական մեթոդները և անոնց հաւատարիմ գործադիր ջէս թողիկները և Սիմոն Պատուիները. և ահա այդ « սարսափեցնող » կայտարակութեան մէջ կը գտնէ հայուներկայ հոգեբանութիւնը պատրաստող մեծ պատճառներէն մին:

« կայձեր »ու մէջ դարձեալ Խենթին Բաֆֆին է. կը շեշտուի առողջ դաստիարակութեան հարկաւորութիւնը միը ժողովուրդի փրկութեան գործին մէջ:

« Խենթ »ի գործիչ Դուղուկջեանի դաս-

տիարակական քարոզները հոս աւելի լայնորէն կը կրկնուին: Հոն՝ զպրոցի կատարած դերին և կարեւորութեան մասին խօսելով, կ'ըսէ. « Նա միայն կը բուժէ մեր դարաւոր վէրցերը և կը պատրաստէ նոր սնըրունդ մի առողջ և թարմ կեանքի համար », իսկ հոս կ'աւելցնէ. « Մեզ պակասէ նորահաս երիտասարդութիւն, որոնք կարող են զրականութեան և լրագրութեան միջոցներով զարթեցնել և նախապատրաստել ժողովուրդին »:

Բայց ուղիղ պէտք է ըմբռնել Բաֆֆիական սկզբունքները: Ազատ Դաստիարակութեան տիտղոսին տակ յաճախ կը բըռնարարուն ուղիղ սկզբունքները: Դաստիարակութիւնը կը յղանայ միջոց մը յեցած աւելի արտաքին ազգակներու վրայ, ֆիզիքականին կրթութեան, մարզանքի և գէնցի վարժութեան. և եթէ կը ջատագովէ դպրոցի կարեւորութիւնը ազգային վերականգնումի գործին մէջ, այս իմաստով պէտք է հասկնանք:

« կայձեր »ը կիսաւարտ գործ մնացին, վէպը որչափ իր վերջաւորութեան կը մօտենայ, այնքան աւելի կը մթննայ. կը թուլնայ ներքին միութիւնը և իր կառուցուածքին մեծութեան անհամաչափ և անբնականոն փակում մը կ'ունենայ. այս պատճառով չենք ուղեր աւելի տեսութիւններ կատարել:

Թողլով Բաֆֆիի միւս գործերը, գոհացանց լնդհանուր ակնարկներու ձեւին տակ, նկատողութեան առնել « Խենթ »ը, « Դ. Բէէկ »ը և « կայձեր »ը, որոնք իր գլխաւոր արտադրութեանց մէջ ժամանակի կարգով երեք առաջինները եղան և բաւարար են Բաֆֆիի գրական արուեստին և ընկերային ու բարոյական հայեցակէտներուն շուրջ գոհացուցիչ զաղափար կազմելու և ըմբռնելու Բաֆֆիական ոգին:

ՐԱՖՖԻԻ ԴԵՐԸ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԵՒՆԸ

Բաֆֆի իր կատարած գերով մեծապէս ազդեց հայու ճակատագրին վրայ, գրական, ընկերային և քաղաքական բոլոր խաւերուն մէջ:

Հայ Մշակոյթի բարձրացումին համար

մղած իր պայքարին մէջ, ձեռք բերաւ հսկայ նուաճումներ և զանոնց գլուխ գործոցներու վերածելով, կտակեց ապագայ հայ մտաւորականութեան անգին հարստութիւններ, որոնք անկորնչելիօրէն կը մնան, և հայուն հետ մէկտեղ կը քալեն ամէն երկնցի տակ, « կայձեր » բռնկցնելու համար մթութեան մէջ:

Իր ստեղծած վէպը ամենէն մեծ նորութիւնն էր մեր նոր Գրականութեան մէջ, իր լեզուով և բացատրութիւններով: Հայ հրապարակագրութիւնը, թատերագրութիւնը և բանաստեղծութիւնը կանուխէն գտած էին իրենց լեզուն. Բաֆֆի ստեղծեց վէպի լեզուն, լայն իմաստով:

Արովեան վէպի համար գաւառական բարբառ գործածեց, հասկնալի միայն սահմանափակ վայրերու մէջ. Բաֆֆի խօսեցաւ հանուր հայութեան, ներկայ ոգերանութեան լեզուով և զգացումներով. ահա թէ ինչո՞ւ այնքան արագ և ընդհանուր եղաւ իր ազգեցութիւնը, և իր գործերը ցարդ կը պահեն իրենց թարմութիւնը, որովհետեւ կը բալեն ժամանակից հոս սահմանուր հետեւ կանգնայ ուղարկութիւնը, այնու կանգնայ ուղարկութիւնը, իր որովհետ կանգնայ ուղարկութիւնը, ասով կը բացատրուի Քամառ Քաթիպայի սա վկայութիւնը, թէ Բաֆֆին հասկցողները աւելի նոր երիտասարդութիւնն էր, մինչ հասակակիցները զինքը թիչ կ'ըմբռնէին:

Բաֆֆին կանխող վիպագիրներուն (բացի Աքովեանէն) և Բաֆֆիի միջեւ լեզուական և արտայայտութեանց ձեւերու այնքան խոր տարբերութիւն կայ, որ վերելը միայն եղական տաղանդի կարողութեամբ կը բացատրուի: Լեզուական տեսակէտով, ամենէն յաջող գործը « Սամուէլ »ը կը թուի: Քամառ Քաթիպա Սամուէլի ընթերցումն վերջ, գովեստի երկտող մը գրեց Բաֆֆիի և « կեցցես Բաֆֆի » բացագանչութեամբ յայտնեց իր հիացումը: Մինչ նախորդ գործերուն շուրջ դիտելու կէտեր գտած էր:

Բաֆֆի վիպագրութեանէ դուրս իր գործը շարունակեց Հրապարակագրութեամբ.

1884 Ապրիլ 24 առ Փանեանց գրած իր մէկ նամակին մէջ կ'ըսէ. «Ես այն աստիճան սովորած եմ հրապարակախօսական պարապմունքին, որ ինձ համար մի կենսական պահանջ է դարձել, որովհետեւ չեմ կարող անգործ մնալ: Իմ սրտից արիւն է զնում, երբ տեսնում եմ, որ մեր հրապարակախօսները ամէն կեղտութիւն դուրս են թափում, իսկ ես ստիպուած եմ լուր ականատես լինել»:

Ասով մօտէն զբաղեցաւ ժողովուրդով, որ օր մը անոր զարդարները իրականացնելու համար, աննախընթաց զոհորութիւններու պիտի ձեռնարկէր:

Թէպէտ ասկէ նիւթական՝ մեծ շահ չունեցաւ, մանաւանդ թէ երբեմն անարդար յարձակումներով քննադատուեցաւ, բայց գաղափարականի համար շարունակեց. «Լաւ է աշխատիլ, կ'ըսէր, առանց վաստակի, քան անգործ մնալ. անգործութիւնը մեռեներին է պատկանում».

(Կայձեր. Ա. 213):

Վերջացնելէն առաջ չենք ուզեր զանց ընել մէջ ըերելու Բաֆֆի մէկ յօդուածը, գրուած 1886ին, ուր կը տեսնենք թէ ինչ կը խորհէր Բաֆֆի ինքնիր մասին: Այս յօդուածին մէջ Բաֆֆի պատասխանելով իր դէմ ուղղուած անարդար յարձակումներուն, ցոյց կու տայ իր կատարած դերը հայ վիպագրութեան և զբականութեան զարգացումին մէջ:

«Թողներուի մեզ, կ'ըսէ, որ մենք մեր մասին պիտի խօսենք... գէթ ինքնապաշտպանութեան համար: Մեր հասարակութիւնը սաստիկ մոռացկոտ է, պէտք է միշտ յիշեցնել նրան:

«Մեր զբական ասպարէզում մենք գործել ենք թէ իրեւ հրապարակախօս և թէ իրեւ վիպագիր: Առաջինի մասին չենք խօսում...»

«Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշագրութիւն չէր դարձել Տաճկահայերի կեանքի վրայ:... Մենք եղանք առաջինը որ մտանց պատմութեան խորցերը և... ի լոյս ածեցինք «Դաւիթ Բէկը, Պարոյր Հայկազնը, Սամուէլը և թարգմանեցինք Ղարաբաղի Աստղագէտը»:

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան չէր մտածել օտար ազգերի կեանքը հայոց վէպին նիւթ դարձնել: Մենք տուեցինք առաջին օրինակը, երբ զրեցինք «Հարեմը, Բիբի Շարաբանին, Խազիուշերը եւն»:

«Մենք չենք խօսում մեր զանազան ուղեգրութիւնների և ժողովրդական նկարագիրների մասին, ինչպէս են «Հայ կինը և հայ Երիտասարդութիւնը»:

«Մեքը չենք ունեցել մեր հախորդը, այլ մեր ետեւից քարշ ենք տուել նոր գործներին: Մենք առաջինն ենք եղել, որ վստահութիւն ենք ունեցել Հայոց դեռ անմշակ, աղքատ զրական լեզուն վէպի լեզու դարձնել և պահել մեր ինքնուրութիւնը:

«Իբրեւ մի ենոյ ուղրուրեան կարապետ, «Ուկի Աքաղաղը, Ումտեալ Միանձնուշին, և Անմեղ վաճառքը»:

«Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշագրութիւն չէր դարձել Տաճկահայերի կեանքի վրայ:... Մենք երեւան հանեցինք նրանց կեանքի ամենատխուր պատկերները, երբ զրեցինք «Կայձերը, Խենթը, Զալաւեդինը, և Ղարիբ Մշեցին»:

«Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշագրութիւն չէր դարձել Պարսկաստանի հայերի դրութեան վրայ: Մենք նկարեցինք նրանց աննախանձելի կեանքի պատկերները, երբ զրեցինք «Գեղեցիկ Վարդիկը, Առվը, Կուսագրութիւնը, Անրախտ Հոփիսիմէն, Միթ օրավար հողը, եւն»:

«Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշագրութիւն չէր դարձել հասարակական կազմութեան մի բոլորվին ներխած, ապականուած մասին վրայ, որ գործում էր մթին խորշերում: Մենք երեւան հանեցինք այդ անձանօթ հասարակութիւնը, երբ զրեցինք «Խաչազողի Յիշատակարանը»:

«Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշագրութիւն չէր դարձել անցեալի վրայ:... Մենք եղանք առաջինը որ մտանց պատմութեան խորցերը և... ի լոյս ածեցինք «Դաւիթ Բէկը, Պարոյր Հայկազնը, Սամուէլը և թարգմանեցինք Ղարաբաղի Աստղագէտը»:

Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան չէր մտածել օտար ազգերի կեանքը հայոց վէպին նիւթ դարձնել: Մենք տուեցինք առաջին օրինակը, երբ զրեցինք «Հարեմը, Բիբի Շարաբանին, Խազիուշերը եւն»:

«Մենք չենք խօսում մեր զանազան ուղեգրութիւնների և ժողովրդական նկարագիրների մասին, ինչպէս են «Հայ կինը և հայ Երիտասարդութիւնը»:

«Մեքը չենք ունեցել մեր հախորդը, այլ մեր ետեւից քարշ ենք տուել նոր գործներին: Մենք առաջինն ենք եղել, որ վստահութիւն ենք ունեցել Հայոց դեռ անմշակ, աղքատ զրական լեզուն վէպի լեզու դարձնել և պահել մեր ինքնուրութիւնը:

«Իբրեւ մի ենոյ ուղրուրեան կարապետ, «Ուկի Աքաղաղը, Ումտեալ Միանձնուշին, և Անմեղ վաճառքը»:

նամիներ և նախանձողներ վաստակէինք: Եւ վաստակեցինք...:

«Շատ գործել և սակաւ խօսել, միշտ այս է եղել մեր կեանքի կանոնը: Թողն ներուի մեզ, որ այս անգամ մեղանչեցինք մեր սովորական համեստութեան դէմ»:

Խորցին մէջ Բաֆֆի կը շօշափէ ճշմարտութիւն մը, բայց ոչ ամբողջական ճըշմարտութիւնը. ըսածները անշուշտ պատգամի երկիւղածութեամբ պէտք չէ որ ընդունինք: Անձին ներողին ատեն լաւագոյն է խօսեց ուրիշին թողուկ: Պատմութիւնը և հետագայ սերունդը աւելի ճշգրտութէն է արժանիքը:

Հայ ազատագրութեան շարժումին մէջ արտակարգ եղաւ Բաֆֆի ազգեցութիւնը: Տեսանք թէ ինչպէս ինքը եղաւ լաւագոյն ներկայացուցիչը մեր ցեղային զգացումներուն և իր «Բաֆֆիական հարցը» դարձաւ բովանդակ ազգին հարցը: Համաշխարհային հրապարակին վրայ ուժգին կը բողոքէ. «Մի քրէական յանցանք է մարդկութեան դէմ, թողնել մի այսպիսի ազգական վագութիւնը: Տեսանք թէ ինչպէս ինքը եղաւ լաւագոյն պատակի թականի բակաւագութիւնը մարդկան մարդկան վագութիւնը մարդկան ազգական վագութիւնը» (Խենք, 193):

\* \*

Մենք տօնեցինք Յորելեանը մեր Ազգային Վիպասանին, բովանդակ Հայութիւնը իսանդավառուած է անոր յիշատակով, ասիկա կը նշանակէ թէ տակաւին թիզգապէս ոչնչանայ վայրենի քրդի ութուրը լծի տակ» (Կայձեր Ա. 466-67), բայց միւս կողմէն ցաւ կը յայտնէ որ բայց միւս կողմէն ցաւ կը յայտնէ որ բայց միւս կողմէն ցաւ կը յայտնէ որ «Հայը իր դատը մարդավարի կերպով «Հայը իր դատը մարդավարի կերպով «Հայը կամքի մասին, «Կամաշականց տուննէ», կ'ըսէր խենթին մէջ, հաշիւ կատարելով պատմութեան վրայ, բայց ոչ ալ կ'ուզէր որ սամամէջ պանծացումներով օրօրուինք, որովհետեւ մենք ենթակայ ենք վաղեմի «Աւանդական ինքնախարութեան» մը:

Համիտեան բռնապետութեան օրերուն և ուստական գրաբննութեան տակ երբեմն զսպուեցաւ իր զրիչը, բայց իր հրապարակ նետած «Խենթ»երը և «Կայձեր»ը լուսական լուսութիւններին և ձմեռնային գիշերներուն՝ խարոյկի լուսով կը կարգութիւնների մեջ կը կարգութիւնների: Պատրաստուած մտքերու կարդաց կայձերը կարելի չէր մարել, վրայ ինկած կայձերը կարելի չէր մարել, վրայ ինկած կայձերը կարելի չէր մարել, անոնք իրենց հրդեհը ճակատագրականութիւն յառաջ կը տանէին:

Իր հատորները անորակելի խանդավառութիւն ստեղծեցին երիտասարդ հայութիւններին մէջ և իրենց հրահրող շունչով երեմն նաեւ անխոհեմ կայձերը շնչեցին բայտասարդ սերունդին, որ արտակարգ երիտասարդ գործութիւնների գործեց ազգային գայնդանութիւնների գործեց ազգային գայնդանութիւնների:

Հակապէս գերազանց է Բաֆֆի տուած դատը:

— Ամէն բանէ առաջ ծառայել Հայ- ըախտապարտ զգացումին ապացոյցն է և  
ըենիքին —. Այս է ահա ամենէն մեծ պար- ամենէն շքեղ փառապսակը մեր Յորելեար  
տականութիւնը նոր սերունդին. ասոր Վիպասանին լուսաւոր ճակտին:  
հաւատարիմ առողջառութիւնո ամենէն է ։

## Հ. Եսայի ԳՈՈՒԶԵԱՆ

«ԴԱՒԻԹ ԲԵԿ»<sup>բ</sup> ՊԱՏՄՈՎԱՆ ԱՂԲԻՒՐՆԵՐԸ  
ԵՒ  
ՄԽԻԹԱՐԵԱՆ Ք

Զեռնաբկելէ առաջ մեր առաջադրած  
նիւթին՝ ուրախ ենք ըսելու թէ Ազգային  
մամուլը – 1937 – 1938 – ամբողջ տարի  
մը, որպէս դարադարձ Բաֆֆիի ծննդեան,  
ճոխաբար արձանագրեց ինչ որ խօսուե-  
ցաւ և զրուեցաւ Հայ մեծ վիպագրի կեան-  
քին և զործերու մասին:

Ընդհանուր գծով՝ Հայութիւնը զրագէտէն վեր գաղափարախօսն էր որ փառաբանեց Բաֆֆիի մէջ, քանի որ նա զիտցած է իր վէպին մէջ զնել այնքան խոր հայրենասիրութիւն, և կեանքի գերագոյն նպատակ՝ ազգի պատիւն ու զատը արիւնի և մահուան գնով։

Այդ գաղափարներն են անշուշտ - համակ էութիւն Թափփիի վէպին - որ ըլլալով անկախ ժամանակէ ու անջրպետէ, միշտ կենդանի ու թարմ կը պահեն անոր վէպը, և հետեւաբար միշտ ալ կը գործեն իրենց ներշնչողի և խանդավառողի գերով. ու միեւնոյն միջոց կը սիրցնեն Թափփին բոլոր անոնց՝ որ Հայու արիւն և Հայու սիրտ կը կրեն:

Այս ապատակէն դուրս է հոս վերլու  
ծել զրական Բաֆֆին՝ որ անշուշտ շատ  
ցած կը մնայ հայրենասէր Բաֆֆիի բար-  
ձրութենէն. և իրաւացի է աւելի ներդաշ-  
նակութիւն փնտռել բարդութեանը մէջ  
տիպարներուն՝ որոնք դիւցազներ կը ներ-  
կաւանան մեծ վիպագրի գործերուն մէջ:

Աւելորդ չենք նկատեր յիշեցնել ընթերցողին թէ որպէս վիպագիր Բաֆֆի իր ազգային պատմական վէպերուն մէջ՝ շատ

դիմած է երեւակայութեան՝ ամբողջացնելու համար շէնքը որուն հիմերն ու զլիսաւոր սիւները միայն կ'ընձեռէր պատմութիւնը՝ գրաւոր կամ աւանդական։ Այդտեղ բաֆփի իր ազատութեան մէջ է։ Իր աւելի կամ նուազ ճարտարութիւնը և ընդլայնութերու բնականութիւնն է որ խնդրոյ առարկայ կրնայ դառնալ՝ գրական-գեղարվութեական դատումին առջեւ։

Բայց երբ հալըց է պատմական իրողութիւններու, ճշմարիտ կամ հաւանական դէպքերու, կարելի չէ զանոնք մերժել կամ փոխել առանց բաւարար և բանաւոր փաստի. հու ճշմարտութիւնն և արդարութիւնը կը միջամտեն, և իրենց դատաստանին կ'ենթարկովի պատմական վէպի հեղինակը:

Այս տեսակէտով է որ պահ մը թերացած կը տեսնուի Բաֆֆի - ինչպէս պիտի նկատենք յետոյ «Դաշիր Բեկ»ի մէջ, որ իր պատմական վէպերուն ամէնէն խանդագառողն է, ըստնք նաեւ ամէնէն սըրտայոյզը վըլիպումովը այն յոյսին՝ որուն իրականացման համար այնքան արիւն և անքան զօհէր ողջակիզուեցան։

\* \* \*

Որբան որ «Լոյսը արեւելքէն» է կ'ըս-  
ուի, սակայն հինէն, մանաւանդ մեր ազգը,  
իր ուրախութեան և վշտի օրերուն ստէպ  
Արեւմուտք կը գարձնէր իր աչքերն ու սիր-  
տը, ըլլայ քաղաքակրթական - առեւտքա-  
կան տեսակէտով, ըլլայ կրօնական։ Եւ

ինչ զարմանք որ մեր եկեղեցին դեռ այն-  
քան հաւատքով կը շարունակէ իր դա-  
րաւոր օրհնութիւնն և աղօթքը «Օրհնեսցի  
և պահպանեսցի... Արեւմտեան կողմն աշ-  
խարհիս, և թագաւորութիւն քրիստոնէց»:  
Եւ ահա յիշեալ կրկին տեսակէտով Ա-  
րեւմուտքի մէջ կը գտնենք «Գաւիր բեկ»ի  
երկու դիւցազները. Ստեփան Շահումեան՝  
վենետիկ, և Աւետիք քահանայ՝ Հոռոմ:  
Շահումեաններ արդէն կային վենետիկ,  
ինչպէս յայտնի է շատ մը պատմական  
տեղեկութիւններէ: 1750ի Օգոստ. 1ին  
հրատարակուած Վենետիկան վաւերա-  
գիր մը<sup>1</sup> մարդահամարով կու տայ թիւր Հայ  
աշխարհիկ և եկեղեցական անձերու, անոնց  
կարգին՝ չորս Շահումեաններու անուններ<sup>2</sup>  
(Saum) որոնց առաջինը՝ գաղութի աւա-  
գանիին դասէն է – Ստեփանոսը (Stefano  
Saum): Իսկ թէ այդ հայ դիւցազնը  
երբ Վենետիկ եկած է՝ կը գտնենք մեր

1. Nota di quanti Armeni e figli d'Armeni  
adulti che si ritrovano in questa inclita Città  
di Venezia, tanto secolari, quanto religiosi, in  
questo di primo Agosto 1750.

զայտում բարեկարգ պահանջման մեջ է առ այս հաճախ  
2. Հ. Ալեքսան «Ալեսական»ին մէջ կու առյ հաճախ  
մեանց ազգաբանութիւնը՝ բաղադ վենետիկյ Հայոց Ա-  
խաչ եկեղեցւոյ և պետական գիւտաններէն, հաստատելով  
թէ 1650էն աւ առաջ Սահքան զօրպավրի չօրիղայրը  
Ոսկան որդի Սահակի՝ Արքաւթիւն եկած է և վենետիկ  
հաստատուած:

ինչպէս կը տեսնենք Միկթար Արքահօր ուստաք և,  
շահումեան ընտանիքը մտերիմ կերպով բարեկամացած  
էր Միկթարեան Ուլստիս հետ։ Այդ բարեկամութեան ա-  
պացոյն է և իրենց կրօնասէր բարեպաշտութեան՝ որ  
1736ին գանցիս եկեղեցւոյն մէջ զեկոցիկ խորան մը կը  
շինեն նուիրուած՝ Ա. Լուսաւորչի, երեք յարզի պատ-  
շեան կերպով՝ որոնք զործն են Ֆր. Zugno զեղինակին, և  
1737ին ալ նոյն խորանին առջեւ պատրաստեր էին իրենց  
համար զերեզման մը, կափարիչին վրայ զնելով հետե-  
ւեալ տապանագիւլը.

ՊԱՓԱՆՑԻ ՇԱՀԱԿԱՄԵԱՆՑ ՏՈՒ  
ՊԱՐՈՒ ԶԱՐԱՐՈ ՈՐ Ե ՊԱԽԹԱՆ  
ՊԱՐՈՒ ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՆԵՍԻՆ  
ՊԱՐՈՒ ՆԱՀԱՊԵՏԸ ՊՈՂՈՍԵՆ  
ԵՏՈՒՆ ՀԵԽԵԼ ՀԱՅԱ ՍՈՒՐԵ ՄԵԴԱՆ  
ԵՒ ԸՆԴ ՆՄԻՒՆ ԶԱՅԱ ԳՈՄԱՐԱՐՈՆ  
Ի ՑԻՇԱՏԸ ԵՒ Ի ԿԱՅԱՆ

Առաջին դրամը կազմում է 100 լար.

թերցողներուն ծանօթ Հ. Յովհաննէս  
ովմաճանի ինքնակենսազրութեան մէջ:

Այս Հ. Յովհաննէս, դեռ պատաճի,  
1722 թ.-ին 19էն Օմիւռնիալէն մեկնե-

ՅՅ Յուեիս Եշր Զարւուսայէս ապ-  
վ կ'ուղեւորի իտալիա՝ Միխթար Աք-  
հօր աշակերտելու համար. Օգոս. օ-ին  
հասնի Լիվոննոյ՝ ուրիշներու հետ. հոն  
միայ բառակերինս արգելարանով՝ 62  
• իր գալուստն իմացուցած ըլլալով մեր

անաշնորհ Հիմնադրին՝ Սա հայրական  
գածու սրտով իր Օգոստոս 22 թուա-  
ով կը պատասխանէ իրեն զբելով՝ թէ  
արեկամի մը կը յանձնէ զի՞նքը՝ որ  
ընկերի մը հետ վեճենետիկ զրկէ զի՞ն-  
է Երկրորդ նամակով մը<sup>3</sup>՝ զոր ստորեւ  
դնենք ամբողջապէս իրերեւ նշխար մը  
իր երանաշնորհ Հիմնադրին օծուն զրչին  
իրերեւ նմոյշ դարու աշխարհաբարին –  
իլիթար Արքահայր անունը կու տայ յի-  
ալ բարեկամին՝ Զաքար: Հ. Յովհաննէս

կ. ինք ամուսնացած է Վենետիկի՝ Մարիամ Վառաչուսի Պաղպալայի հետ հաւատնօրէն 1746-7ին, և ունեցած է երեք զատակ՝ որոնց երկութը Յովհան և Մարիա Պաղպալայի, 1757էն անդին սնանկացած կամ փակուած շահումնանց վաճառառառնը՝ որ զամասկեան կերպաս, յշելիներ և ապակեղին ջաներ կը ծախէր, Ստեփան ահումնան մեռած է Նախը քան 1782 թուականը, չի գոյացաւ առեւն Ա ենետիկ թէ անկէ զուրս:

3. Ի ձեռն Ստամբուլի Յարուրիչն պատահեց  
հասց ի բարին ի Կազարէր

Digitized by srujanika@gmail.com

Բազմաւ օրնութեամբ ծանիք՝ Յարութիւն, զի ես  
իրն քո առի. և իմացայ որ զու հետ Միելիւն զալ  
ու ուզեր. այլ կուզես մինակ լինիւ, Նօրա համար ա-  
և ես զբեզ իմ զրովն յանձնեցի պարոն Զաքարիային,  
ըեղ տիրութիւն անէ. և ամենայն կերպիւ լաւ հոգ  
անի քո վերայ և զբեզ լաւ հաւատարիմ փուռքազով՝  
կէս սատ ի Վենետիկ: Եւ յուսան թէ զբեզ յիւր տունն  
անի և պահէ չորս հինգ օր մինչեւ փուռքաչն Ֆիօրեն-  
չյու ելանիւլոյ լինի. և ապա զբեզ կալէսով կու յով  
Ֆիօրենցա, և այնտեղացն փուռքաչն կու յանձնեն  
զեղ և նա կու քրէչ: Դու ջանացիր լաւ նելօք և զգաստ  
անան թէ՛ այդ աեզզ, թէ՛ ի ճանապարհին, և Աստուած  
ճանական լիցի ըեզ Եւ ծանիք զի այդ պարոն Զաքա-  
րիան մեզ մեծ բարեկամ է. և զու այնպէս զիտացիր որ  
զի չօր պէս տիրութիւն կանէ, և զամենայն բանգ կո-  
ուայ: Բայ է:

ՄԻՒԹ-ԱՐ Ա.ԲԲՈՅ.Հ ՀԱՅԻ